Արձանագրություն 2

«Այրվածքաբանության ազգային կենտրոն»ՓԲԸ-ի կարիքների համար
«ՀՄԱ-ԱԾՁԲ-19/26» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.11.2019թ. ժամը 11:00-ին:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Կ. Բաբայան
Հանձնաժողովի քարտուղար՝	Է.Պողոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Բադալով
	Մ. Գուլյանց
	Ս. Հովհաննիսյան
	Լ. Բաղդասարյան

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1 «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՄԱ-ԱԾՁԲ-19/26» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

	Անվանում	Հասցե, հեռախոսահամար	Էլ. հասցե
1.	«ԷՔՍԿՈ» ՍՊԸ 06946802	Հայաստան, Երևան	eqsko@mail.ru
2.	«Ալտվալ » ՍՊԸ 02239216	Հայաստան, Երևան	altval2018@mail.ru
3.	«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ 00440841	Հայաստան, Երևան	gevorgyan.nersisyan@mail.ru

1.2 Համակարգում 04.11.2019թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը, բացառությամբ «ԷՔՍԿՈ» ՍՊԸ-ի, որը համակարգում չի ներկայացրել նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը, լիազորագիրը հաստատված չէ տնօրենի կողմից, ինչպես նաև ամբողջական չէ աշխատողների և տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. <u>Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին</u>

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 ***շինարարական աշխատանքներ***	
	Նախահաշվային գինը՝ 12 418 760 ՀՀ դրամ	
«ԷՔՍԿՈ» ՍՊԸ	2 125 000	2 550 000
«Ալտվալ » ՍՊԸ	5 500 000	5 500 000
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ	10 000 000	12 000 000

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցնել և ծանուցել «ԷՔՍԿՈ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և Հավելված 2.1-ը ուղարկել elinapoghosyan@yandex.com էլեկտրոնային հասցեին:

5.2 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն թվականի նոյեմբերի 6-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Պողոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Բադալով

Մ. Գուլյանց

Ս. Հովհաննիսյան

Լ. Բաղդասարյան